

ԿԱՐԾԻՔ

«Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և հարակից իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ

Հաշվի առնելով վերջին տարիներին ընտանեկան բռնության դեպքերի տարածվածությունը, ինչպես նաև դրանց հետևանքով առանձին խմբերի (օրինակ՝ երեխաների) խոցելիությունը և իրավունքների պաշտպանության մեխանիզմների բացակայությունը՝ «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը կարևոր նշանակություն ունի ընտանեկան բռնությունների դեպքերի կանխարգելման և գործնական քայլերի ձեռնարկման համար անհրաժեշտ իրավական դաշտի կանոնակարգման, ընտանեկան բռնության դեպքերի վերհանման և դրանց դեմ պայքարի մեխանիզմների ներդրման տեսանկյունից:

Միաժամանակ, կարևորում ենք ընտանիքի բոլոր անդամների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունը և որպես ընտանիքահեն հասարակություն ներկայացնող ինստիտուտ՝ ընդգծում ենք ընտանեկան արժեքների պահպանման ու ամրապնդման անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և հարակից իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առկա են նկատառումներ, որոնք ներկայացվում են ստորև.

1. «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) «Ընտանեկան բռնությունը և դրա տեսակները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասում տրվում է ընտանեկան բռնության հասկացության ձևակերպումը: Սակայն, նշված ձևակերպման իմաստով ընտանեկան բռնություն չի համարվում զուգընկերոջ կողմից ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի գործողությունների կիրառումը, ինչը սակայն համահունչ չէ միջազգային չափանիշներին:

Մասնավորապես, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի (այսուհետ՝ Ստամբուլի կոնվենցիա¹) 3-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են այդ թվում նաև *զուգընկերների միջև*: Ավելին, Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցի² համաձայն՝

¹ Ըստ ԵՄ բյուջետային աջակցման ծրագրի Հայաստանի կողմից պետք է ստորագրվի 2017 թվականին

² 42-րդ պարբերություն

ընտանեկան բռնությունը ներառում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնություններ նաև *ներկա կամ նախկին զուգընկերների միջև*:

«Կանանց նկատմամբ բռնության վերացման վերաբերյալ օրեսդրության» ՄԱԿ-ի 2012 թվականի ձեռնարկում նշվում է, որ ընտանեկան բռնությունից օրենքով պաշտպանված անձանց շրջանակը պետք է ընդգրկի առնվազն անհատների, որոնք զուգընկերային հարաբերություններ ունեն կամ ունեցել են՝ ներառելով ամուսնական և *ոչ ամուսնական հարաբերությունները*: Սույն ձեռնարկում նշվում է նաև, որ մի շարք երկրների օրենքներում ընտանեկան բռնության դեպքերը ներառել են միայն ամուսնացած զույգերին, սակայն ժամանակի ընթացքում օրեսդրական շրջանակը ավելի ընդլայնվել է՝ որպես ընտանեկան բռնության տուժող ճանաչելով նաև այն զուգընկերներին, ովքեր ամուսնացած չեն կամ համատեղ չեն բնակվում:³

Նշենք նաև, որ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ) կողմից ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին օրենքների նախագծերի վերաբերյալ տրված կարծիքներում ընդգծվել է, որ ընտանեկան բռնության բնորոշումը օրենքում ամրագրելիս անձանց միջև հարաբերությունների սահմանումը պետք է ընդգրկի դրանց ամենալայն շրջանակը: Մասնավորապես, «Ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ իրավական դաշտում փոփոխություններ կատարելու մասին» Մոլդովայի Հանրապետության նախագծի վերաբերյալ 2015 թվականի հուլիսի 9-ին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ներկայացրած կարծիքում⁴ բացասական է գնահատվել այն, որ կարծիքի ներկայացված կարգավորումների ձևակերպումները չեն ներառում որոշ հարաբերություններ, ինչպիսիք են օրինակ զուգընկերների հարաբերությունները, ռոմանտիկ և սեռական հարաբերությունները այն անձանց միջև, ովքեր չեն բնակվում կամ երբևէ չեն բնակվել միասին:

Ստացվում է, որ միջազգային փաստաթղթերի իմաստով ընտանեկան բռնություն է համարվում նաև զուգընկերային հարաբերությունների մեջ գտնվող անձի կողմից իր զուգընկերոջ նկատմամբ կիրառված՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի գործողությունները:

³ http://www2.unwomen.org/-/media/headquarters/attachments/sections/library/publications/2012/12/unw_legislation-handbook%20pdf.pdf?v=1&d=20141013T121502

⁴ Opinion on Draft Amendments to the Legal Framework on Preventing and Combating Domestic Violence in Moldova, Warsaw, 9 July 2015, Opinion N: AGEND-MDA/271/2015 [AIC], 2.1-րդ մասի 22-րդ պարբերություն

Ուստի, առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել կնոջ և տղամարդու միջև առկա զուգընկերային հարաբերությունները՝ ընտանեկան բռնության հասկացության ավելի ամբողջական սահմանման համար:

2. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումից ստացվում է, որ արարքը՝ որպես ընտանեկան բռնություն որակելու համար անհրաժեշտ պայման է համարվում դրա արդյունքում ֆիզիկական և հոգեկան *ուժեղ* տառապանքի կամ *ծայրահեղ* մեկուսացման վրա հասնելը: Արդյունքում բռնությունը, որն ուժեղ ֆիզիկական տառապանք չի պատճառել տուժածին (օրինակ՝ պարբերաբար թույլ հարվածները), չի համարվի ընտանեկան բռնություն Նախագծի իմաստով: Մինչդեռ միջազգային փաստաթղթերում և այլ երկրների ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության դեմ պայքարի խնդիրները կարգավորող օրենքներում բռնության արդյունքում տուժողի համար վրա հասած հետևանքների ծանրության գնահատողական աստիճանակարգում չի տրվում:

Մասնավորապես, Ստամբուլի կոնվենցիայի 3-րդ հոդվածը, որով ամրագրվում է ընտանեկան բռնության ձևակերպումը, չի նշում բռնության արդյունում տուժողի համար վրա հասած հետևանքի մասին և չի սահմանում դրա ուժգնությունը, որպես գործողության որակման պարտադիր պայման:

Ավելին, «Ընտանեկան բռնության վերացման, ընտանեկան բռնության տուժողների պահպանության և աջակցության մասին» Վրաստանի Հանրապետության օրենքի⁵ 3-րդ հոդվածը սահմանում է ընտանեկան բռնությունը որպես ընտանիքի մեկ անդամի կողմից ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական, սեռական բռնության կամ հարկադրանքի միջոցով մյուս անդամի սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտում:

Իսկ «Ընտանեկան բռնության դեմ» Լիտվայի Հանրապետության 2011 թվականի օրենքի 2-րդ հոդվածի համաձայն բռնություն է դիտավորյալ ֆիզիկական, հոգեկան, սեռական, տնտեսական կամ այլ ազդեցություն գործադրելն անձի վրա գործողությունների կամ անգործության միջոցով, որի հետևանքով անձին ֆիզիկական, գույքային կամ ոչ նյութական վնաս է պատճառվում: Միաժամանակ, «Ընտանեկան բռնությունից պաշտպանության մասին» Մոնտենեգրոյի Հանրապետության օրենքի⁶ 2-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան բռնություն է

⁵ Law of Georgia on Elimination of Domestic Violence, Protection of and Support to Its Victims (2008)

<http://www.legislationline.org/documents/id/16680>

⁶Law on Domestic Violence Protection, 2010, Montenegro

ընտանիքի անդամի կողմից կատարված այն գործողությունը կամ անգործությունը, որը խախտում է ընտանիքի մյուս անդամի ֆիզիկական, հոգեբանական, սեռական, կամ տնտեսական ամբողջականությունը, հոգեկան առողջությունը և խաղաղությունը, անկախ բռնության միջադեպի տեղի ունենալու վայրից:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից և նույն մասի 3-րդ կետից հանել ««ուժեղ», ինչպես նաև նույն կետի «բ.» ենթակետից հանել «ծայրահեղ» բառերը:

3. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվում են ընտանեկան բռնության տեսակները, որոնցից ոչ բոլորի համար են, սակայն առկա պատասխանատվության մեխանիզմներ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության մասին օրենքի իմաստով ընտանեկան բռնություն համարվող արարքները պետք է քրեականացվեն:

Այսպես, Ստանբուլի կոնվենցիայի 33-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն դիտավորությամբ շարունակաբար կատարվող այն գործողությունները, որոնք հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով լրջորեն խախտում են մեկ այլ անձի *հոգեբանական անձեռնմխելիությունը*: Միաժամանակ, 34-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն մեկ այլ անձի դեմ դիտավորյամբ շարունակաբար կատարվող սպառնալից գործողությունները, որոնք այդ անձի մոտ վախ են հարուցում սեփական անվտանգության համար (հետամտում): Ավելին Ստանբուլի կոնվենցիայի 37-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվի չափահասին կամ երեխային ամուսնանալուն դիտավորությամբ հարկադրելը, ինչը տեղ չի գտել նաև Նախագծում:

Վերոնշյալ արարքները քրեականացնելու առաջարկ է ներկայացվել նաև միջազգային կազմակերպությունների կողմից: Օրինակ՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ն ուսումնասիրելով Ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման վերաբերյալ Վրաստանի օրենսդրական փոփոխությունները խորհուրդ է տվել, որպեսզի հետամտումը սահմանվի որպես քրեորեն պատժելի արարք⁷:

⁷ 71-րդ պարբերություն

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում:

4. Ա. Նախագծի «Օրենքի հիմնական հասկացությունները» վերտառությամբ 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն բռնարարն այն անձն է, ում վերաբերյալ ընդունվել է անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում: Իսկ նույն մասի 2-րդ կետով ենթադրյալ բռնարար է համարվում այն անձը, ում վերաբերյալ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմիններ ներկայացվել է ընտանեկան բռնության կատարման մասին հաղորդում կամ տեղեկություն: Նման սահմանման պարագայում պաշտոնական նախազգուշացում ստացած անձը Նախագծի իմաստով չի համարվում ոչ՝ ենթադրյալ բռնարար և ոչ՝ էլ՝ բռնարար: Ուստի առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «ընդունվել է» բառից հետո լրացնել «պաշտոնական նախազգուշացում» բառերով:

Բ. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն ընտանեկան բռնության ենթարկվածի նույնացում է համարվում անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումները: Ստացվում է, որ սույն ձևակերպման պարագայում պաշտոնական նախազգուշացումը չի հանդիսանում ընտանեկան բռնության ենթարկվածի նույնացում: Գտնում ենք, որ տրամաբանական է, որ պաշտոնական նախազգուշացումը ևս համարվի ընտանեկան բռնության ենթարկվածի նույնացում, ուստի առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում «նույնացում՝» բառից հետո լրացնել «պաշտոնական նախազգուշացում» բառերով:

5. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն խնամքի տակ գտնվող անձ է համարվում երեխա, տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձը, որը բնակվում է ընտանեկան բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի հետ և որին վերջինս *մշտապես* հոգ է տանում: Նշված ձևակերպումից պարզ չէ, թե *մշտապես* հոգ տանելը ինչ պարբերականություն է ենթադրում, ուստի առաջարկում ենք «մշտապես» բառը փոխարինել այլ ավելի հստակ բառով:

6. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը սահմանում է ընտանեկան բռնության ենթարկվածի նախնական նույնացման մասին եզրակացություն հասկացությունը, սակայն Նախագծի՝ օրենքի հիմնական հասկացությունները սահմանող 4-րդ հոդվածում ներառված չէ «նախնական նույնացման» հասկացությունը: Այսպես, անհրաժեշտություն է առաջանում Նախագծի 4-րդ

հողվածի 1-ին մասի ընտանեկան բնության ենթարկվածի նախնական նույնացման մասին եզրակացությունը սահմանող 9-րդ կետից առաջ սահմանել նախնական նույնացման հասկացությունը:

7. Նախագծի 4-րդ հոդվածում ամրագրվում են «ենթադրյալ բռնարար» և «բռնարար» ձևակերպումները, որոնք առաջարկում ենք փոխարնել «ենթադրյալ բռնություն գործադրած անձ» և «բռնություն գործադրած անձ» բառերով և համապատասխան փոփոխություններ կատարել Նախագծի համապատասխան դրույթներում:

8. Նախագծի «Ընտանեկան բնության կանխարգելման խորհրդի գործունեության ուղղությունները» վերտառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է այդ խորհրդի ստեղծման կարգը: Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ առաջարկում ենք նշված հոդվածում «խորհրդի» բառից հետո ավելացնել «ստեղծման և» բառերը:

9. Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Ոստիկանությունը պրոֆիլակտիկ հաշվառման է վերցնում այն անձանց, ովքեր *հակված* են ընտանեկան բռնություն կատարելուն: Պարզ չէ, թե ինչպես է Ոստիկանությունը գնահատելու ընտանեկան բռնություն կատարելու հակվածությունը, արդյոք դա կախված է լինելու ստացված դիմումներից, թե նախկինում նման արարք կատարելու հաղորդումից, թե այլ հանգամանքից, օրինակ՝ ակոհոլամոլությունից և այլն: Գտնում ենք, որ սույն ձևակերպումը շատ լայն է, կարող է տարաընթերցվել, ինչպես նաև համահունչ չէ իրավական որոշակիության սկզբունքին: Ոստի առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում հստակորեն սահմանել Ոստիկանության կողմից անձանց պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելու դեպքերը:

10. Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, սահմանելով անհետաձգելի միջամտության որոշմամբ կիրառվող սահմանափակումներից մեկը, նշում է, որ այն չի կարող գերազանցել 10 օրը: Սակայն նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը: Ենթադրվում է, որ նման հատուկ կարգավորումը կապված է տվյալ անհետաձգելի միջամտության տեսակի հետ, որն է հարկադրել բռնարարին՝ անմիջապես հեռանալ ընտանեկան բնության ենթարկվածի բնակության տարածքից, որի արդյունքում անձը հնարավորություն չի ունենա ազատորեն օգտվելու իր

սեփականության իրավունքից: Սակայն հաշվի առնելով այն, որ անհետաձգելի միջամտության որոշումը այն կայացնելուց հետո 48 ժամվա ընթացքում ենթակա է դատական հաստատման, նշված սահմանափակման ժամկետը առաջարկում ենք ևս սահմանել «ոչ ավելի քան քսան օրը»:

11. Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետում առաջարկում ենք «երեխաներին պահելու ծախսերը» բառերը փոխարինել «երեխաների խնամքի ծախսերը» բառերով:

12. Հաշվի առնելով «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման 8-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն խնամակալության և հոգաբարձության մարմինների խնդիրներն են նաև անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը՝ առաջարկում ենք Նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին նախադասության «անչափահաս» բառից հետո լրացնել «, անգործունակ և սահմանափակ գործունակ» բառերով: Նման լրացման կարիք է առաջանում նաև 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության «անչափահաս» բառից հետո:

13. Հաշվի առնելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածը և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, ինչպես նաև Նախագծում տերմինների միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 18-րդ հոդվածի 8-րդ մասում «18 տարին չլրացած երեխա» բառերը փոխարինել «երեխա» բառով:

14. Նախագծի 15-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան բռնության ենթարկվածների պաշտպանության միջոցներն են պաշտոնական նախազգուշացումը, անհետաձգելի միջամտության որոշումը և պաշտպանական որոշումը: Նախագծի 16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածները համապատասխանաբար բացահայտում են այդ պաշտպանության միջոցների էությունը և սահմանում կիառման պայմանները և կարգը: Նախագծի 17-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ անհետաձգելի միջամտության որոշման պահանջները բռնարարի կողմից չկատարելն առաջացնում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն, իսկ 18-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝

պաշտպանական որոշման պահանջները բռնարարի կողմից չկատարելն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

Ենթադրվում է, որ խոսքը վերաբերում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի «Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը» վերտառությամբ 206.9-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի «Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը» վերտառությամբ 353-րդ հոդվածներին: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 206.9-րդ հոդվածի համաձայն օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) այդ ակտերում սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քաղաքացիների կողմից դիտավորությամբ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) քաղաքացու կողմից չկատարելը նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:

Նշենք, որ Նախագծի 17-րդ հոդվածի համաձայն Ընտանեկան բռնության ենթարկվածին անմիջականորեն սպառնացող վտանգի առկայության դեպքում նրա անվտանգության անհապաղ ապահովման նպատակով Ոստիկանության իրավասու ծառայողի կողմից ենթադրյալ բռնարարի հանդեպ կարող է կիրառվել անհետաձգելի միջամտության որոշում, որի կայացնելուց հետո 48 ժամվա ընթացքում այն ենթակա է դատական հաստատման: Մինչդեռ հաշվի առնելով այն, որ այդ միջոցի խախտման համար առանձին պատասխանատվություն նախատեսված չէ, նախքան դատարանի կողմից այն հաստատելը բռնարարի կողմից այն խախատելու դեպքում ըստ էության պատասխանատվության միջոց չի կիրառվի: Ինչ վերաբերում է դատական ակտի չկատարման համար վրա հասնող պատասխանատվությանը, ապա ստացվում է, որ նախ և առաջ վրա է հասնում վարչական պատասխանատվություն և նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում չկատարելու դեպքում միայն՝ քրեական պատասխանատվություն:

Նշված իրավիճակում խնդրի տակ է դրվում այն պաշտպանության միջոցի կիրառման հնարավորությունը, ինչն այս պարագայում չի ծառայի իր նպատակին, այն է՝ ընտանեկան բռնության ենթարկվածների պաշտպանությունը:

Ավելին, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ միջոցների էֆեկտիվությունը բարձրացնելու նպատակով՝ վերջիններիս խախտման համար անհրաժեշտ է քրեական պատասխանատվության սահմանում: Այսպես, Ընտանեկան բռնությունից պաշտպանության մասին Ղրղզստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 28-ին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ներկայացրած կարծիքի համաձայն՝ միջազգային մակարդակով ընդունվել է, որ պաշտպանական միջոցի խախտման քրեականացումը կարևոր երաշխիք է օրենսդրության էֆեկտիվությունն ապահովելու համար: Ուստի նշվել է, որ կարևոր է քրեական օրենսդրությամբ ամրագրել պաշտպանական որոշման խախտման համար համապատասխան պատասխանատվության սահմանումը և համապատասխան նշում կատարել նաև Ընտանեկան բռնության դեմ օրենքում: Համանման կարծիք է ներկայացվել նաև Ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին Վրաստանի օրենքի նախագծի, ինչպես նաև Կանանց նկատմամբ և ընտանեյան բռնության դեմ պայքարի վերաբերյալ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ներկայացրած կարծիքում:⁸

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է քննարկել Նախագծի պաշտպանության միջոցների չկատարելու համար առանձին քրեական պատասխանատվություն նախատեսելը:

15. Նախագծի 27-րդ հոդվածի համաձայն այն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: Ուստի առաջարկում ենք «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածում, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածում, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածում և «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում սահմանված ուժի մեջ է մտնելու ժամկետները ևս սահմանել 2018 թվականի հունվարի 1-ը:

⁸ Opinion on the Draft Amendments to the Legal Framework on Preventing and Combating Domestic Violence in Georgia Warsaw, 17 December 2013, Opinion N: DV-GEO/241/2013 [AIC]

16. Ստամբուլի կոնվենցիայի 46-րդ հոդվածի համաձայն անդամ պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ միջոցներ, որպեսզի նույն հոդվածով սահմանված հանգամանքները ներպետական օրենսդրության համապատասխան համարվեն ծանրացնող հանգամանքներ սույն կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների համար պատիժ սահմանելիս: Նշված հոդվածի համաձայն այդ հանգամանքներից մեկն է այն, երբ իրավախախտումը կատարվել է ներքին օրենսդրությամբ ճանաչված ներկա կամ նախկին ամուսնու/կնոջ կամ զուգընկերոջ նկատմամբ, կատարվել է ընտանիքի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը չարաշահած անձի կողմից, ինչպես նաև կատարվել է երեխայի ներկայությամբ:

Վերոնշյալ հանգամանքները որպես ծանրացուցիչ հանգամանք դիտարկելու վերաբերյալ առաջարկներ են ներկայացվել նաև միջազգային կազմակերպությունների կողմից: Մասնավորապես «Ընտանեկան բռնությունից պաշտպանության մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 28-ին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ներկայացրած կարծիքի համաձայն՝ տուժողի և բռնություն կիրառած անձի միջև ընտանեկան հարաբերությունների առկայությունը, այն դեպքերում, երբ այն կոնկրետ հանցակազմի մաս չի կազմում, պետք է դիտվի որպես պատիժը ծանրացնող հանգամանք քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների համար:⁹ Միաժամանակ, Մոլդովայում ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման իրավական դաշտի փոփոխության վերաբերյալ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի կարծիքում¹⁰ դրական է գնահատվել տուժողի և բռնարարի միջև ընտանեկան կապը որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքի ամրագրելը, ինչը ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի կարծիքով կուժեղացնի Մոլդովայում ընտանեկան բռնության դեմ պայքարի իրավական դաշտը:

Հարցի կապակցությամբ ուսումնասիրված միջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ մի շարք երկրներում տուժողի և բռնարարի միջև առկա ընտանեկան կապը հանդիսանում է պատիժը ծանրացնող հանգամանք, օրինակ՝ Ավստրիայում տուժողի և բռնարարի միջև ընտանեկան կապը կամ նախկին ամուսիններ լինելու հանգամանքը, այն դեպքում, երբ բռնարարը բնակվել է տուժողի հետ համատեղ

⁹ Opinion on the Draft Law of the Kyrgyz Republic on Safeguarding and Protection from Domestic Violence , Warsaw, 28 October 2014, Opinion N: GEND-KYRG/261/2014 [AIC] 3.2 մաս, 51-րդ պարբերություն

¹⁰ Տես նույն տեղում, 58-րդ պարբերություն

իրավախախտումը կատարելու պահին, կամ չարաշահել է տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը հանդիսանում է ծանրացնող հանգամանք:¹¹

Ուստի առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն՝ այն համապատասխանելով միջազգային չափանիշներին:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է հանդիսանում տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ *հակաբարոյականությունը*, որով պայմանավորվել է հանցագործությունը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման մեղմացնող հանգամանք նախատեսելը համահունչ չէ միջազգային չափանիշներին:

Մասնավորապես, Ստամբուլի կոնվենցիայի 42-րդ հոդվածի համաձայն հանցագործությունների անընդունելի արդարացումներ են համարվում՝ հանուն այսպես կոչված «պատվի» կատարվող հանցագործությունները: Հոդվածով, մասնավորապես, սահմանվել է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության որևէ գործողության առթիվ հարուցված վարույթի ընթացքում՝ մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ այսպես կոչված «պատիվը» չդիտվեն որպես նման գործողությունների արդարացում: Սա վերաբերում է, մասնավորապես, այն պնդումներին, որ տուժողի կողմից խախտվել են պատշաճ վարքագծի մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդութային նորմերը կամ սովորույթները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետն ընտանեկան բռնության դեպքերում չկիրառու բացառություն նախատեսել:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով: Մասնավոր հետապնդման գործեր են համարվում ՀՀ քրեական

¹¹<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806a6b72>

դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը: Մնացած բոլոր հանցագործությունների վերաբերյալ գործերը համարվում են հանրային հետապնդման գործեր:

Մասնավոր մեղադրանքի պարագայում այն դեպքում, երբ տուժողը հաշտվում է իրավախախտում կատարելու մեջ կասկածվող անձի հետ կամ հետ է վերցնում իր դիմումը, ապա քրեական հետապնդումն այդ անձի նկատմամբ դադարեցվում է: Մինչդեռ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության դեպքերում մասնավոր մեղադրանքի ինստիտուտի կիրառումն ու հաշտության հիմքով գործի վարույթը կարճելու օրենսդրական պարտադիր պայմանն ընդունելի չէ:

Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ներկայացված հանձնարարականի համաձայն անդամ պետությունները պետք է քաջալերեն դատախազությանը, որպեսզի վերջիններս կանանց և երեխաների նկատմամբ բռնության դեպքերը համարեն ծանրակշիռ հանգամանք այդ դեպքերը հանրային մեղադրանքի կարգով քննելու համար:¹²

Համանման դիրքորոշում է ներկայացված նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով: Մասնավորապես, դատարանը նշել է, որ պետությունը ոչ միայն պետք է զերծ մնա դիտավորությամբ և անօրինական անձին կյանքից զրկելուց, այլ նաև պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի պահպանի իր իրավասության ներքո գտնվող անձանց կյանքի իրավունքը: Սա ներառում է պետության առաջնային պարտականությունը ամրագրելու կյանքի իրավունքը՝ անհրաժեշտության դեպքում ամրագրելով կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն, որպեսզի պաշտպանվի այն անձի կյանքը, որը ռիսկի տակ է դրված մեկ այլ անձի հակաօրինական արարքի հետևանքով: Դատարանը նշել է նաև, որ հաշվի առնելով բռնություն կիրառած անձի կողմից նախկինում կատարված իրավախախտումների լրջությունն ու ծանրությունը, քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է հնարավորություն ունենան շարունակելու գործի քննությունը որպես հանրային մեղադրանքի գործ, անկախ նրանից, որ տուժողը հետ է վերցրել իր բողոքը, թե՛ ոչ:¹³

¹² Recommendation Rec(2002)5 of the Committee of Ministers to member states on the protection of women against violence 1 (Adopted by the Committee of Ministers on 30 April 2002 at the 794th meeting of the Ministers' Deputies)

¹³ Opuz v Turkey, 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռ, գանգառ թիվ 33401/02, կետեր 128, 145

Միաժամանակ, Մոլդովայում ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման իրավական դաշտի փոփոխության վերաբերյալ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի 2015 թվականի հուլիսի 9-ի կարծիքում¹⁴ ողջունվել է այն, որ ուժը կորցրած է ճանաչվել ընտանեկան բռնության դեպքերում տուժողի և մեղադրյալի միջև հաշտության դեպքում քրեական վարույթի դադարեցման դրույթը: Ավելին, նշվել է, որ հաշվի առնելով այն ռիսկը, որ ընտանեկան բռնության դեպքում այս ընթացակարգը կարող է պատրադրվել տուժողին, ով պարզապես դեմ չի լինի հաշտությանը վախենալով մեղադրյալից, խորհուրդ է տրվում բացառել հաշտությունը ընտանեկան բռնության բոլոր դեպքերում կամ այն դեպքերում, երբ բռնությունը կատարվել է տուժողի ընտանիքի անդամի կողմից:

Ուստի կարելի է եզրակացնել, որ մասնավոր մեղադրանքի դեպքում հաշտության կամ տուժողի կողմից դիմումը հետ վերցնելու պարագայում գործի կարճման բացարձակ պահանջը վիճահարույց է: Անհրաժեշտ է սահմանել հստակ հիմքեր, որի առկայության պայմաններում քրեական հետապնդում իրականացնող մարմինները կարող են ընտանեկան գործի քննությունը շարունակել հանրային մեղադրանքի կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք վերանայել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումները՝ բացառելով ընտանեկան բռնության դեպքերում տուժողի և մեղադրյալի միջև հաշտության ձեռքբերման հիմքով գործերի կարճման բացարձակ պահանջը:

19. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի «Անհետաձգելի միջամտության որոշման դատական հաստատումը» վերտառությամբ 31.2-րդ գլխի 222.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Գտնում ենք, որ նման մոտեցումն արդարացված չէ հաշվի առնելով այն իրավունքները, որոնք կարող են սահմանափակվել դատարանի որոշմամբ: Միաժամանակ դատական ակտի բողոքարկամ հնարավորության պայմաններում կարող է հարց առաջանալ վերջինիս կատարման և անհետաձգելի միջամտության

¹⁴ Opinion on Draft Amendments to the Legal Framework on Preventing and Combating Domestic Violence in Moldova Based on an Unofficial English Translation of the Draft Amendments Provided by the OSCE Mission to Moldova, 5.2 կետ, 61-րդ պարբերություն

որոշման նպատակային կիրառման հարցում: Այսպես, այն պարագայում, երբ սահմանվի բողոքարկման հնարավորություն, որի պայմաններում անհետաձգելի որոշման կատարումը կդադարեցվի մինչև դատարանի կողմից բողոքարկման հիման վրա գործը քննելը, կարող ենք փաստել, որ խնդրահարույց կլինի այդ միջամտության կիրառման անհրաժեշտությունն ու նպատակայնությունը:

Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է քննարկել դատարանի կողմից անհետաձգելի որոշման հաստատման դեպքում դատարանի որոշման բողոքարկման հնարավորությունը՝ առանց այդ միջամտության կիրառման դադարեցման:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ